

ՅԱԳԱԳՈ ՀԱՅԿԵՐՈՒՏԻ ԵՒ ԸՆՏԱՆԻ ԻՐԱՅ

ԽՕՍՈՂԻՔ. — ՏԻՐԱՏՈՒՐ, ՂԱԶԱՐ, ԾԱՏՈՒՐ, ԽԱՅԱՏՈՒՐ, ԳԱՒՈՒՏԱՏ, ԱՌԱՔԵԼ, ԲԱՐՂԱՄ, ՂՈՒԿԱՍ,
ԹՈՐՈՍ, ԲԱՐՍԵԼ, ՊԱՏՈՒՆԵ ՄԱՐԻԿԻՐ:

Երրորդ խոսակցութիւն:

(Տէս 2-ր. 1Ը, Պր. Դ, էջ 340):

Տ. Այ տղայ Ղազար, գնա մին մեր
Ծատուրն կանչէ գայ:

Ղ. Աղայ, գնացի, Ծատուրն նոր
տեղ էր մտել. ասաց թէ շորս հագնիմ¹
գամ:

Ծ. Բարի իրիկուն Աղային. թողու
թիւն անես Աղայ, շատ վատտակի էսօր
շուտ գնացի տեղս Ղազարն եկաւ ասաց.
Աղէն կանչում այ:

Տ. Գիտես, ախպէր Ծատուր, ինչու
քեզ էսէնց բիւլախտ² կանչեցի:

Ծ. Հրամէ, Աղայ, զուլուղիդ³ հա-
ղիր եմ:

Տ. Իզուց, ախպէր Ծատուր, մեր տանն
հացկերուտ այ, շատ մարդ եմ կանչել,
ամէնքն աղիզ և դօստ մարդիք են:
Մուգբախի ֆիւրն⁴ ամէնն քո ձեռն
եմ տալիս. էս փողս յինք առ ու գնա ի-
զուց առաւօտէց բազարն, ինչոր բազա-
րէն պիտի առնուլ, թամամին դու լաւ
գիտես, ամէնն մինտեղ առ⁵ բեր քո մու-
բարօք⁶ ձեռօքդ ամէն ինչ հազիր արա՝
ինչպէս որ լայեղն այ⁷:

Ծ. Ինչ կուզես Աղայ՝ որ առնում:

Տ. Առ երեք դառն, երկու ոչխար,
յիսուն հաւ, յիսուն կաքաւ, քսան ե-
րեսուն լաւ խարրիզակ⁸, էլ իքմին չէ
պէտք, զարա մեր բաղլումն տանձն,
խնծորն, ըշտաղուկն⁹, գալինարն¹⁰, սալ-
զին¹¹ ու ծաղիկն բօլ այ. գինի արաղ¹²,
գիւլաբ¹³ մեր տան կայ բօլ բօլ, Աստու-
ծոյ փառք. մա մուռացայ, հարիւր լաւ
թաղայ ձու էլ կառնուս:

1 Անժամ: 2 Ծառայութեանդ: 3 Խոհակերու-
ցի հոգ: 4 Օրհնեալ: 5 Վայել է: 6 Սէխ: 7 Դեղձ:
8 Կեռաս: 9 Կանաչեղէնք: 10 Եփած, օղի: 11
Վարդեղուր:

Ծ. Լաւ այ, պարոն. մա ինչ կուզես
որ իզուց յինեմ:

Տ. Այլա՞ մարդ ես. քանի հետ է-
սէնց պատվի համար իքմին ես հաղիրել,
դու քանց ինձ լաւ գիտես. մենակ էն կա-
պսպարեմ քեզ՝ որ խորովածն, դօլմէն,
եախնին, փլաֆն ու խորովուն դու քո
ձեռօքդ յինես, ջահիլի¹ ձեռն չտաս:

Ծ. Գլխիս վրայ, Աղայ. ինչ որ ձեռ-
նէս կուգայ ծառայութիւն կանեմ:

Տ. Դէ մին թաս գինի խմէ, գնա շուտ
քնիր՝ որ իզուց սաբաբ հի շուտով գնաս
բազարն՝ ինչոր ապսպրեցի առնուս,
հէնց արա որ էլ ինձ խօսացնես ոչ:

Ծ. Բարի այ, Աղայ. գիշեր խաղաղու-
թիւն Պարնին:

Տ. Քեզ լոյս բարի այ, Ծատուր. սա-
խըն չլին թէ իզուց երեխէքդ տան
թողնուս. մա ասա որ ամէնքն մեր տուն
գան:

Խ. Բարի լոյս, Պարոն Տիրատուր:

Տ. Հայ, Աստուծոյ բարին քեզ, Պա-
րոն խաչատուր. բարով եկիր, հազար
բարի եկիր. համեցէք նստիր, աչքի լոյս:

Խ. Զաղ ես ժիր¹, Պարոն Տիրատուր,
քո տեսող մուշթաղ² ինք. ինչպէս են
քո երեխէքդ, տան քուլֆաթն³:

Տ. Փառք և զօհուլթիւն Աստուծոյ,
սաղ ենք ամէնքս օղուլուշաղով:

Պատու. Բարի լոյս Պարնացն:

Տ. Բարով, հազար բարի եկիք իմ
Պարոնայք. համեցէք տեղն նստեցէք.
Պարոն Գալուստ, Պարոն Աւաքէլ, Պա-
րոն Բարզամ, Աստուած սիրէք՝ նստե-

1 Զարմանալի: 2 Անփորձ: 3 Ողջ առողջ: 4
Փափաքող: 5 Ընտանիքն:

ցէք էն տեղ. այ Պարոնայք, ձեր ծնողաց հոգին կուսիրէք բիթաք լուֆ¹ նրա տեցէք: Այ խնամի, դու էն տեղ նստիր. այ փեսայ, եկ իմ կշտին նստիր. այ չու միտի՞մ, ձեր որդոց արուն կու սիրէք՝ ե. կէք նստեցէք, ճաշի վախտ այ, սեղւնն ձգած այ: Այ տղայ փանոս, լազան, ի. բրիդ ու մահրամայ² բեր, որ ձեռն լուանանք:

Խ. Պարոն Տիրատուր, համեցէք սեղանն օրհնէ:

Տ. Հրամանքդ օրհնէ, Պարոն խաչատուր:

Խ. Օրհնեսցի սեղանս անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս, Ամէն: Հայր մեր՝ որ յերկինս ես՝ սուրբ ե. զիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո. եղիցի կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիւր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ՚ի շարէ. (զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս), Ամէն:

Տ. Բարով եկիք, պարոնայք, հաղար բարի. համեցէք, համեցէք՝ Պարոնայք:

Տ. Այ տղէք, ձվի վրայ մին թաս գինի տվէք: Տուր Պարոն խաչատրին:

Խ. Պարոն, Աստուած սիրես, առ թաւըն, թող սաղիքն³ կարգաւ թաս տան առանց թաւազայ անել⁴:

Տ. Խիստ բարի այ, ես չերէմնի չեմ գիտել. Պարնաց առողջութիւն, հաղար բարի լինի ձեր գալն:

Պատու. Անոյշ Պարոն Տիրատուր. անոյշ Պարնին:

Տ. Ձեր մին օրն հաղար այ. տղայ թորոս, խորովածն բերէք. ասա՝ դօլմէն ու եախնին էլ հազիրեն:

Պատ. Պարոն Տիրատուր, քո հրամանքդ հաց չես ուտում:

Տ. Ես կուտեմ. ամայ այ տղէք տեղէս հեռանալ միք, գինի տվէք՝ թէ չէ դառն կու սաղանայ:

1 Առանց անուանութեան և քաղաքաբարութեան: 2 Բարբառ: 3 Վարչամակ: 4 Մատուռակ: 5 Առանց արարողութեան:

Պատ. Այ Պարոն, նոր խմեցինք. հրամանքդ հաց կեր:

Տ. Թողութիւն արէք. ձեր հրամանքն լաւ գիտէք՝ որ առանց արիւն միսն մեռած միս այ: Այ տղա մարդիք, ձեր արեն կու սիրէք՝ ինձ բարկացնել միք եսօր, շարմանդայ¹ չանէք դիս:

Պատ. Այ Պարոն, Աստուած սիրես, շատ ջանքայ² մի քաշել. Աստուծոյ փառք, տղէրքն լաւ զուլուղ են անում: Խորոված չկերիր, եախնին էլ դօլմին հետ եկաւ, մին սիրուն հաց կեր, որ մեք էլ ուրախանանք՝ ու մին դօլու խմենք քո կենացն:

Տ. Աստուած սիրէք, Պարոնայք, ուրախ կացէք. Պարոն Գալուստն լաւ գիտէ՝ որ ես մին մուրդար փայ³ ամ:

Խ. Խմենք էս թասս:

Տ. Ձէ չէ, Պարոն խաչատուր, դեռ հաց չեմ կերել, թողութիւն արա, դու խմելոյ վախտ չէ:

Ա. Պարոն խաչատուր, ձեր հրամանաց դաստուրով ուղարդայ՝ դեռ դօլու խմելոյ վախտ չէ. մա շաղաւթ կանես⁴ էն քո զնացած երկրի հազարն⁵ մին քիչ նաղր կանես՝ զլիսացաւութիւն պարոն:

Տ. Պարոն Աւաքէլ, խաթրդ չմնայ՝ խօրօզի բիհագնամ⁶ ես. դեռ հաց չեմ կերել, դու ուղում ես աշխարհս քննես. երբոր մեր բաղէն կերթանք, էն վախտըն կուզես՝ դեռնի տակն քրքրէ, ես վեր չեմ ընկնիլ:

(Բ. Հէրբա՛ր, շատ դօլրա՛ տալիս, աղիկն անայ օր ըզ քի մոյն փութք քօշ պահիս, զարա հրամանքդ տուն տայ. բըս բխտիար օվլիս):

Ա. Ուղուրդ այ նասում⁸ Բարազամն, պարոնն Տիրատուր. քու հրամանքդ մուսասի բիտայրլոս, զօկ պարուններս քու սօֆլիդս կանչած օր զօվզ անիք, օվրախ պահա՛ շատ քամի նարին աղիկ չի:

1 Երբմէնտէ անել. ամեցնել: 2 Նեղութիւն: 3 Մուրաբ փայ. միջին ոտից տակ, խոնարհ, նուսաս: 4 Շաղաւթ անել, հաճել, հաճոյ բան մը ընել: 5 Հանդամանքն: 6 Անծամ, ձառն քաղցուցիչ: 7 Պարծանք, հպարտութիւն: 8 Ուղիչ ըսաւ Բարազամն:

Տ. Պարուն՝ դառն¹ դուք ըշխարբիս բանին խրէր չիք՝ թղթթիւն արիք . դառն դուք զովդն նիդիլ չիքթա² . անշայիս անշարդար միծմիծ³ մարդու հիտ նրստած զովդ ըմ արած՝ օր դուք անշադար լրսած չիք . նղանիք ունչ⁴ ակապարք⁵ :

Գ. Հրէս . փրաքն ու գորովուն⁶ եկաւ . ինչ էք խօսում պարզ խօսեցէք՝ որ մեք էլ իմանանք էլ :

Տ. Հան, հան, հան, Պարոն Գալուստ, էդ ինչ ասացիր . քանց էս մեր լեզուն էլ պարզ Հայի լեզու կայ . հալա շարավաթ արա էս խորովուն կտրատէ ու բաժանէ . ես յետոյ քո հրամանուցդ արդ⁷ ա . նեմ որ քանց մեր Հայկարն՝ փաք⁸ Հա . յևար չըկայ :

Խ . Պարոն Տիրատուր, նեղանաս ոչ . ալար խօզք լսեցի՝ թէ քանց ձեր լեզուն պարզ լեզու չըկայ . հիմիկս էր որ Բարդամին ու Առաքելին հետ խօսում էք , ես իսկի չըհասկացայ թէ ինչ էք խօսում . էդ ինչպէս պարզ Հայի լեզու այ, պարզն էն այ որ ամէն Հայ հասկանայ . Զուղեցեալն, Ղափանցեալն ու Հոռմըցեալն լաւ կու հասկանամ . մա ձեր զօկ մեկն խաբար չեմ թէ ինչ այ , ու ասացեր թէ արդ կանես ձեր հայեալի փաք լինիլն :

Տ. Ուրախ կացէք, Պարոնայք՝ թէ զիս կուսիրէք . զարաֆաթ⁹ այ էստունք ամէնն : Տղայ, մին թաւ գինի տուր՝ որ մէյդան մտնում :

Խ . Պարոն, չըլինի թէ նեղացար, ես էլ խօշթար¹⁰ եմ անում :

1 Դեռ : 2 Խաղն ինչ է չի գիտէք : 3 Մեծ մեծ , մեծամեծ : 4 Մի նեղանաք : 5 Այս երեք տուն խօսակցութեանց մեկնութիւնն է : 6 Խորովուն , խորովածն : 7 Յուշանք : 8 Պարզ : 9 Կատակ : 10 Կատակ :

* Բ. Հօրեղայր , շատ կը պարծիս . լաւագոյն է որ մի փոքր գեղէ չամեստ պահես , վաս զի Հրամանքդ կոշտ տես ես . բայց ազատ ես :

Ա. Խրատել է Բարդամինը բռնան . Հրամանքդ կոշտ տես ես , այս պարոնայքը հրաբխած ես որ ուրախ ըլլան , ուրեմն ուրախ պահէ գիտէր : Հոգմայ տառիկ չըլլէ ախորժեկ չէ (այսինքն , մեծարանքութիւնը անտանելի է) :

Տ. Պարոն, դուք դեռ ալիարհի իրաջ անգետ էք . թուղթթիւն բռնէ , գնա դուք կատակ ինչ բռնէ և չէք դիտեր : Ինչ այսինքն մեծամեծ մարդկանց հետ նստած կատակ բռնած եմ , որ դուք դեռ պնդաք լսած չէք . ծանր չէայ մեզի , եղբայր (դժուարեիդ չէայ) :

Տ. Պարոն խաչատուր, չեմ հաւատալ թէ մեր միջումն ինչ նման խօշթարչի մարդ լինի . խնդրեմ որ մին քիչ ուրախութիւն անենք . ինչ որ ասացի՝ իսպաթ¹ կանեմ . կուղէք որ ես մեր լեզուաւ մին տալ ասեմ որ իմ տամուկս կու հաստատէ , ու իմ փեսի մեր Հայի լեզուի վրայ շինած թարիֆլաման² այ . շատ ձիգ այ . մա մին քանի տունն սերտ եմ , էն կասեմ ամէնն սիրտ չեմ :

Դ. Շաղավաթ կոնես , մա Պարոն Տիրատուր, ինչ որ կուեսս՝ սիրով լինի :

Տ. Այ ջօն³ փեսայ քո տաղդ ասա՛ , կոնես կոնես մրտանիմա :

Ղ . Խայի լիզուն մոյն լիզու ա . Ծովա մօռ խուսուղ Զուղեցին ա . Որ նասիլըն գուլն դովմանա⁴ .

Լիզիկ քանդուն⁵ Հափանցին ա . Մեր վիլեաթի⁶ լիզուն պօրդ ա .

Աման⁷ լիզու պօրդ⁸ խուսիլ ա⁹ . Բօրդի ֆարսի թա ֆրանգի ա .

Հէնց նիդիս թա իւր լիզուն ա . Իզար նուրա ֆի բակակա .

Սահար դովաթ քամթար բանդա . Արանգ ուշուր բանդախանա .

Ռիսիօստ փըրքազ գըրդլու չումա . Ալ փատ լուն տուն զայիֆիա .

Տ. Հէրիք ա փեսայ . Պարոնայք , խաթիրմայ չնիք , զարաֆաթ ա¹⁰ :

Խ . Ախպէր, հէնց այ՝ թէ դու էլ ինչ նման շատ զարբերութիւն ես քաշել . անունդ ինչ այ , ախէր , ու ինչ երկիր ես ման եկել , շարավաթ կանես¹¹ թէ կասես . զարա ես էլ շատ զարբերութիւն եմ քաշել , թէ Հնդուստան և թէ Օսմանլուի երկրումն :

Ղ . Իմ անունն քո ծառայ Ղուկաս այ . իմ շուրջ եկած տեղն մօտիկ քան տարի ֆրանկաստան էր , Ռուսի երկիրն , Լէհն , Տալիա , Ալլէմանիա , ֆրանցա , Սպանիա , ինգիլիթեռա , Հօլլանդա . տեղէն նալով եկի Ստամբուլ . յետոյ ցաւաբով Անգուրիա , Թօխաթ , Արզուում , Թիֆլիզ , Երևուն , Նախչևան . Նախչևա .

1 Ապացոյց : 2 Թարգմանութիւն : 3 Սերելի : 4 Գայլն զայ : 5 Գանդող : 6 Գաւառիկ : 7 Ամն : 8 Պարզ : 9 Խօսի : 10 Խաղ են : 11 Հանդա . կան ինչ առնես :

նայ էսօր ամսուկէս այ որ տուն եմ եկել :

Խ. Բարի ես եկել, ակալէր. աչքի լոյս սաղ են քո ծնօղքն :

Ղ. Չէ, Պարոն, սաղ չտեսի ծնօղքս, շատ փափուք ունէի, նասիբ¹ չեկաւ. փառք Աստուծոյ :

Խ. Աստուած ողորմի ծնօղացդ հոգւոյն, և ամենայն հաւատացեալ ննջեցեալ :

Տ. Այ պարոնայք, ձեր դաստուրով երբ որ բաղչէն կու գնանք, էն վախտն երկրի անվայի վերայ խօսենք, և այլ որիչ սօհրաթ² անենք: Խմենք հիմա մեր Հայրապետի կենացն. Աստուած իւր ամօրն հաստատ պահէ :

Պատ. Ամէն. անոյշ, անոյշ Պարնին :

Տ. Պարոն, էս հայրապետի զօրւ այ պիտի թամամ խմես :

Խ. Խմենք, Պարոն Տիրատուրի կենացըն :

Տ. Այսօ. էդ աղաթ³ չէ, խմենք քո հրամանուց կենացն :

Խ. Չունքի որ էդ հէնցայ խմենք մեր քսանի կենացն :

Պատ. Անոյշ :

Խ. Խմենք, Պարոն, Տիրատուրի ընկերով (կողակցի) կենացն :

Տ. Չէ չէ, բաղչումս իմ կընկան կենացն կու խմենք :

Խ. Պարոն Տիրատուր, սեղանն օրհնէ, գնանք բաղչէն որ շատ շող այ :

Տ. Բարի այ, հրամէ օրհնէ, պարոն խաչատուր :

Խ. Գոհութիւն և փառս տացուք անուամբ ջօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս, Ամէն. Հայր մեր :

Պատ. Պարոն Տիրատուր, տունդ չէն՝ սեղանդ լի, Աստուծոյ բարիքն անպակաս քո տանէդ, Աստուծոյ շուքն քո տանն վերայ, Աստուած որդւոցդ երկար կենանք տայ :

Տ. Չեր մին օրն հաղար. թողութիւն արէք իմ պակասութեան. այ որդայ թորոս, խալիքն ու նաղբալիչներն⁴

1 Բախտ: 2 Խօսակցութիւն: 3 Ամբողջութիւն: 4 Բարձ երեսաց:

տարէք բաղչէն. փռեցէք մին շուք տեղ ու մին նոր դաստարխան¹ ձգեցէք :

Թ. Այո, ամէն ինչ հաղիր ենք արեւր Տ. Համեյէք, պարոնայք, գնանք կամաց կամաց բաղչէն: Այ թորոս մին քանի տղայ քեզ հետ առ, գնացէք մին տեղ գետն, մին քանի ձուկն բռնեցէք, որն խորովեցէք, որն տապակեցէք որ բերիք բաղչէն: Ասա թաթմօսին ու փանտօսին գան բաղչէն զուլուդ² անեն. մաշաւէլ³ ասա իմ որդի Բարսեղին՝ որ գայ մօտս :

Բ. Հրամէ, Բաբա, ինչ կուզես :

Տ. Գնա մօրդ ասա՝ որ պահաղիցն⁵ շուտ մին քանի լաւ փունջ ծաղիկ քաղէ՝ տայ քեզ որ բերես մեր մաշիկան :

Խ. Պարոն, ասա որդւոյդ որ մէրն էլ ծաղիկն առնու հետն գայ էս տեղ քո կուշտն :

Տ. Այսօ, էս Ֆռանկատան չէ. հրամանեք լաւ գիտես՝ մարդոյ կնկան հետ զօվոն⁴ առանձին պիտի, թէ որ աղաբի⁵ կանոնացն կուզենք հետեիլ թէ չէ աղաթն շատ անգամ խարաբաթի⁶ ստ բար⁷ ոյ. կրակն ու զափն մին տեղ սաղիլ չեն :

Պատ. Ինչ մեծ, սիրուն ու զարդաբուն բաղչայ այ. իլ լաճ էս առուի ջուրն՝ ինչ որ ասես կաթէ. ես էսէնց խաղողի թալվար⁸ զալվի թալնամա⁹, ու բարաթ բարաթ¹⁰ արծու չեմ տեսել :

Տ. Պարոն, էս թաղնամի թարգն փեսէս այ Ֆռանկատանու ինձ ուղարկել :

Գ. Թամաշայ արէք¹¹ էս թուրլու թուրլու խաղողի քանի ձե, քանի ոսնդ խաղող կայ :

Տ. Պարոնայք, առանց հանաք տալոյ¹². էս իմ բաղչումս ու երկու այգումս որ ունիմ՝ վացուն բարաթ¹³ խաղող կայ :

Ղ. Ես Ֆրանկատան մին քանի տեղ տեսել եմ թէ մեզ մօտ այսքան այսքան բարաթ խաղող կայ. իսկի ուղեւ չեն

1 Փռոց: 2 Մառայութիւն: 3 Ամբողջութիւն: 4 Բարձ երեսաց: 5 Պարկեշտի: 6 Ապակաութիւն, չարիք: 7 Պատմաւ: 8 Զանկ: 9 Գեղեցիկ սրահ: 10 Գոյնաղոյն, պէտքէ: 11 Դիտեցէք: 12 Առանց կատակի: 13 Տեսակ:

հաւատալ. կասեն՝ թէ դուք մին ան-
կիրթ աղգ էք, ձեր խօսքին թամալ¹
չկայ:

Խ. Ոչաբ չէ² ախէր զարա ինչպէս
էլ՝ էնդունց մինն ասել այ. էսոր Հային
ոչ թուր ունի, ոչ գրիչ, խարբալելոյ վա-
խրտ այ. կարծեմ թէ էդհէնց մարդոց
ասես թէ Հայոց երկիրն մին մեծ ու
առատ երկիր այ, քանց ամենայն եր-
կիր հին՝ յետ ջրհեղեղին առաջին բնա-
կութիւն, հին աղգ՝ հին լեզու, հաւա-
տալ չեն:

Խ. Ճշմարիտ էդ հէնց այ, Պարոն. զա-
րա կասեն թէ Հայի լեզուն մին նոր լե-
զու այ՝ ու թուրքի և այլ օտար լեզուի
հետ շաղած թան այ:

Գ. Թող ինչ կուղեն ասեն. ինչպէս որ
Աստուած զմեզ ստեղծել այ՝ էն հէնց
ենք. ոչ էնդո՛ք գիտեն զմեզ փոխել՝ ոչ
մեզ հաջաթ այ էնդունց զարշու խօսիլ:

Տ. Քար անասթ՝ քի խօզա բըսա-
ղէդ³. պարոնայք, խմում եմ. Աստուած
մեր խեղճ ազգին ողորմի, իւր գութն
մեզնից չվերացնէ:

Տ. Ամէն. Աստուծոյ ողորմութիւն
անապակաս լինի մեր ազգիցն. Աս-
տուած ամենայն Գրիստոնէից խաղա-
ղութիւն ու սէր տայ՝ որ մին զմին սի-
րեն, մէկմէկու վատ չասեն, մէկ մէկու
հետ ատելութիւն չունենան:

Խ. Պարոն Տիրատուր, էնդունք ոյ-
կն, որ էն հեռի արծուի մօտ⁴ ծաղիկ
են քաղում:

Տ. Մեր տան խիղանն⁵ այ, պարոն,
իմ կնիկն ու իւր աղջկերքն:

Խ. Քանի զաւակ ունիս:

Տ. Հինգ, երկու տղայ, երեք աղջիկ:

Խ. Ազաբ⁶ են ամէնքն՝ թէ սպակած
էլ ունիս:

Տ. Տղայոցս մինն կնկատէր այ, մինն
էլ նշանած ունի. երկու աղջիկս պա-
կել եմ, մինն նշանած այ:

Խ. Թոռն էլ ունիս:

Տ. Ունիմ պարոն վեց թոռն, չորսն
տղայ՝ երկուքն աղջիկ:

Խ. Թոռներդ ինչ բանի վերայ են:

Տ. Երկու թոռնս վանքում կարդում
են, մինն բազրգանի դուլլոյում¹ այ,
մինն տան այ, աղջկերաց մինն անապա-
տում կուսանաց մօտ ասաղադործութիւն
այ սովորում, մինն դեռ ջահիլ² այ:

Խ. Աստուած զօրացնէ թոռներդ.
լաւ ես արել խիստ լաւ, որ ամէնքն
սանիաթի³ ես տվել ու լաւ տեղ. մա-
տղէդ բաժանված այ քեզնից՝ թէ տա-
նըդ այ:

Տ. Չէ, Պարոն, բաժանված չէ, տանս
այ. գոհութիւն Աստուծոյ, մին աղիկ և
աչքաբաց տղամարդ այ, հարսնս էլ չա-
փէն ՚ի դուրս հնազանդ, ամսթխած ու
բանվոր բանդ այ, որ մինչև թարիզս⁴ մին
այիթ⁵ չեմ տեսել, ոչ գանգատ եմ լսել:

Խ. Փահ. երանի քեզ, բասբալու⁶
զրախտի միջումն ես:

Տ. Գոհութիւն Աստուծոյ. այ Բար-
սեղ, գնա հարսին ասա, մին քանի թափ-
սի իէմիշ ուղարկէ մեզ:

Պատ. Մէք էստեղ ամէն բաբաթ
իէմիշ միջում ենք, էլ ինչ իէմիշ պիտի:

Տ. Թողութիւն արէք՝ կուղի ասել
խարբիզակ:

Գ. Այ պարոնայք, գնանք մին քիչ
բաղէն շուրջ գանք, էն հնձանն տես-
նինք:

Խ. Փէհ, բերան չէ, տաճար Աստու-
ծոյ այ:

Տ. Համեցէք, պարոնայք, ինչ բա-
բաթ իէմիշ կուզէք՝ քաղեցէք՝ կերէք,
ձեզ անոյշ. գնանք յետոյ մեր կարա-
սատունն, մին քանի կարաս բանահը:

Խ. Էս քաղցր տանձ այ, հէնց այ թէ
փէյվաստի¹ լինի. մա էս ինչ մեծ հնձան
այ, մի թէ քանի սալակ² խաղող կոխել
կտաս էս տեղ:

Տ. Մօտիկ երկու հարիւր սալակ մե-
նակ էս հնձանումս:

Պատ. Աստուած բարաբաթ³ տայ:

¹ Հինն: ² Զարմանանք չէ: ³ Այնպէս պէտք
է ինչպէս որ Աստուած կատարէ: ⁴ Այն հե-
ռու արտերու մօտ: ⁵ Ընտանիքն է: ⁶ Զգար-
դում:

¹ Մաւայէ: ² Մատաղ: ³ Գործ: ⁴ Միջնայ.
սոր: ⁵ Աթթ, նախատիք: ⁶ Իրաւջընէ: ⁷ Պա-
տուաստ: ⁸ Կողով: ⁹ Սրհնութիւն:

Դ. Դեռ մարան էլ կայ էս հնձանումս :
 Տ. Էդ մարանումը զօստի¹ ու մեր տան համար մին քանի արտղի , վարդաշրի , թահինի ու քացախի կարաս կան : Զմեռան համար ապուխտ , չորածան , խաշխաշ ու քալիշ² սոխ : Էս մարանի գլխին մին որիշ մարան կայ , խաղողի ու սերկենի համար այ . էն զօլաբուսն այլապլ բունջարի սերմանը կու պահենը , բարաթբաբաթ քալամի³ , շաղկամի , բողիի , գազարի⁴ , կոտիմի , գնձի , ռազիանի⁵ և այլ խոտոց ու ծաղկանց սերմանը :

Խ. Էս ինչ սիրուն օթախներ են էս առուի թմբին՝ էստունց դօշամէն⁶ , դռներն , դռնակներն , բուխարիքն⁷ ու գաճած նախշած⁸ պատերն , ամէնն բաղդատի այ :

Տ. Էստունը ամէնն հիւրի համար այ :

Խ. Էնդունը ինչ ամաբաթ⁹ են :

Տ. Ամառան մուգբախ այ , որ ունի իւր օջաղն , թոնիրն , ցանխոտըն , մարանն ու ներքնակն կամ զարգամինն¹⁰ : Էն մուգբախի յետկոյսն մին գոմ ունիմ որ քսան ձի ու ջորի կու տանի . գոմին կը պած մին փետականոց էլ ունիմ , որ մօտիկ չորս հարիւր փետակի տեղ ա :

Խ. Լաւ մեծ փարախ այ , մա էն քարէ սանդխտոյն ուր կերթաք :

Տ. Էն տեղէն կերթանք էն դիմաց էյվանն¹¹ ու մեր կտերներն¹² . զարա երբ ամառն այ , կամ էյվանումն կու քնենը կամ կտերն . համեցէք թէ որ ջաֆա չէ ձեզ՝ դնանք մեր էյվանն որ սիրուն խմելոյ թամաշայ անելոյ տեղ այ :

Խ. Քո ամաբաթն ամէնն ծաղկած ու նախշած ամաբաթ այ . դեռ գիր էլ ունի էս էյվանս . էն ինչ այ գրած . հէնց այ թէ ֆարսի լինի :

Տ. Ֆարսի այ , պարոն . այ փեսայ , մին կարգա տեսնիկը թէ ինչ այ :

Դ. جهان لی برادر زماند بکس
 دل اندر جهان اثر یی بند و یس

Գ. Էս լաւ սէլրանգահի¹ էյվան այ , իլլահ ամառն . ու լաւ զարգարած էլ այ՝ էստուր խալիքն , դօշակներն , նաղբալիշն² , հայելիքն , նաղաշ քարին փանշարի³ ձին , փարգէքն⁴ , ամէնն սիրուն յօրինած այ :

Պատ . Աստուած տիրոջ արգանի անէ :

Խ. Ամէն . Պարոն Տիրատուր , չէն կենաս : Բարով Բարսեղ որգիդ էլ պասկես . Էս գնում եմ ձեր դաստուրով զարա իրիկունս պիտի գնամ վանքն , Առաջնորդին հետ մին զլխաւոր բան ու նիմ :

Տ. Էր ես թահդի⁵ , պարոն . դեռ շատ ժամանակ կայ մինչև իրիկունն :

Պատ . Չէ պարոն՝ մին օրդ հազարդ՝ սեղանդ լի , գնալոյ վախտ այ . քանց էս էլ լաւ մօհբաթ⁶ ու սօհբաթ⁶ :

Գ. Էս էլ ուղորդ պիտի իրիկունս գնամ վանքն՝ որ Սահակ վարդապետին հետ մին սխլաթ բան ունիմ . դօվլաթ զիադ⁷ , պարոն Տիրատուր՝ գնանք :

Տ. Իխթիար⁸ ունիք , պարոնայք , տունն ձեր այ , ամէն ձեր զուլլուղին հազիր եմ . մա մին խնդիրը ունիմ ձեզնէ՝ , պարոն Խաչատուր , թէ զբոլկ կանէք⁹ , ես էլ ձեզ հետ գամ չուրի վանքն՝ մեր Առաջնորդին տես :

Խ. Բարի այ , խիստ բարի , թէ քեզ ծանրութիւն չէ՝ մեզ շատ ուրախու թիւն այ ու փառք :

Տ. Այ տղայ փոռոս , գնա երեք ձի թմբել¹⁰ տուր մեր նոր ռախտոյն¹¹ , մին մին ջուխտ թափանշայ էլ վերան . ու թամբած ձիանքն բերել տուր փախախն :

Պատ . Համեցէք , պարոն :

Տ. Էս մին թասն էլ խմենք մեր առաջնորդի կենացն :

Գ. Վանքումն շատ բարաթ հին ու

1 Բարեկամի : 2 Զմեռնային : 3 Կաղամբ : 4 Ստեղծող : 5 Սամբ : 6 Կահէն : 7 Ծխնեղոյ : 8 Փաշապա պատան : 9 Գոյնգոյն նկարած : 10 Ամաբաթ , չէնք : 11 Դաշմարտն : 12 Տանիք :

1 Զուարճալի : 2 Բարձ : 3 Պատուհանի ձև : 4 Վարդապետ : 5 Խնու կու շտապես : 6 Փան զայս լաւ է բարեկամութիւն և ընկերութիւն : 7 Բաղդադ , յաջող : 8 Աշտուրութիւն : 9 Կընդու նիք : 10 Պատրաստել : 11 Զարգէ ձիայ :

անոյշ գինի կայ . զնանք էն տեղ , նորա
ու ամէն միաբանից կենացն մին մին
թաւ խմենք :

Տ . Տեղէս չուրի վանքն երկու սհաթ
ճանապարհ այ . պիտի ծարաւ զնանք՝
թէ վանքամի լաւ գինի կայ :

Խ . Էր ենք ծարաւ՝ մինչև հիմա խը-
մում ինք :

Տ . Ինչ որ լինի՝ թէ Առաջնորդի կե-
նաց այ , թէ ուրախ ճանապարհ զնա-

լոյ համար այ՝ մին շահքստով՝ խմենք .
Գ . Խէյր՝ բանին զարշու կենալն՝ լաւ
չէ . զէ հրամէ՝ որ ժամանակն կարճ այ .
Խ . Համեցէք՝ հեծնուճք ձին . կացէք
բարով , պարոնայք ե կըրայրք :

Պ . Աստուած ձեզ բարի ճանապարհ
տայ . վանքցոց մեզնից շատ բարե :

1 Բաժակ : 2 Բարի :

MARTYRE DE S^T ATHÉNOGÈNE EVÊQUE

(Continuation. — V. pag. 28).

Or, le prince comprenant l'invincible fermeté de l'athlète, prononça la sentence: Puisque vous n'avez pu être convaincu et conduit au bien, ni par les examens, ni par la bienveillance de mon très victorieux empereur, au sujet d'une lettre inconvenante adressée à mon Excellence; et que, refusant de reconnaître le culte des dieux, vous avez préféré rester dans la même obstination; vous êtes digne de recevoir une telle sentence. Et il lut le décret, qui contenait: « Il a dit contre moi toutes les inconvenances que nulle personne de haute société ne peut dire ou entendre; pour tout cela je l'ai condamné au feu. » Ainsi fut accompli le martyre de S^t Ariston, dix jours avant les calendes d'août.

Puis le juge s'occupant de Sévérien, lui dit: Avez-vous sacrifié aux dieux, Sévérien? Et lui répondit: Oui. Le prince: La sage bienveillance de nos Empereurs et la bonté de nos dieux vous ont conduit à la bonne voie; quant à Ariston, pour son entêtement et l'aberration de ses idées, je l'ai récompensé selon son mérite; maintenant j'ordonne de vous mettre aussi dans la prison, sous bonne garde, jusqu'à l'arrivée d'Athénogène, afin que je puisse m'instruire complètement sur la lettre.

Ainsi fut martyrisé S^t Ariston à Sébaste. Quelques-uns croient faussement que c'est Hrékin, autre disciple de S^t Athénogène. Cependant on sait que ce Hrékin ne fut pas martyrisé à Sébaste, mais bien dans la ville de Césarée, où est encore son tombeau; car, pendant la cruelle persécution de l'Eglise, Athénogène l'y avait envoyé,

afin qu'il pût connaître les tourments des chrétiens, et leur résultat, et les lui raconter. Les persécuteurs des chrétiens, apprenant la venue de Hrékin, le prirent, le mirent à la torture; mais lui se réjouit, remercia le Seigneur, et fut martyrisé, laissant une bonne renommée. S^t Athénogène informé du martyre de Hrékin, pendant qu'il était à Sakoubin, rendit gloire au Seigneur. Celui que plusieurs croient martyrisé à Sébaste, c'est Ariston, non pas Hrékin. S^t Athénogène est conduit par des soldats dans la ville de Sébaste. La femme d'Agricolaüs connaissant la bonne renommée de l'homme de Dieu, alla à sa rencontre, et se jetant aux pieds du Saint, dit: J'ai appris, ô mon maître, et je crois que vous êtes un digne serviteur du Christ, et que toutes les choses que vous lui demandez, il vous les donne sur-le-champ. Or, j'ai une faveur à vous demander, parce que vous obtenez tout de votre Seigneur et Maître en qui vous espérez. J'ai une fille, depuis longtemps possédée d'un esprit impur; priez donc pour qu'elle soit délivrée de cet esprit impur; et moi je supplierai mon époux, et je le persuaderai de vous laisser libre, et de ne pas vous tourmenter. Le Saint dit: Si vous me croyez digne de mon Seigneur, qu'il soit fait selon votre volonté; mais si vous parlez pour moi, et m'empêchez de suivre ma vocation, le démon la tourmentera pour toujours, plus fortement encore qu'auparavant. Votre demande exaucée, allez à votre maison. Fondant en larmes, elle envoya le Saint homme à la ville, et retourna à sa maison.

Le prince Agricolaüs apprit l'arrivée de